ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	**Առաջարկի անվանումը**	**Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)**	**Առաջարկի կարգավիճակը** • Ընդունվել է • Մերժվել է	**Մերժման դեպքում՝ հիմնավորումը**
1.	Տարեցների համար ժամանցի կենտրոնների ցանցի ստեղծում ինչպես Տաշիր քաղաքում, այնպես էլ գյուղական բնակավայրերում	Տարեցները, հատկապես գյուղական բնակավայրերում, ոչ բարենպաստ եղանակայնին պայմաններում չունեն որևէ վայր, որտեղ հնարավորություն կունենան միմյանց հետ շփվել, կազմակերպել իրենց ազատ ժամանցը: Մեծահասակների շփման հարթակը լուծում է մի քանի կարևոր խնդիրներ՝ *1.*Սոցիալական մեկուսացում. ստեղծում է նոր կապեր ու շփման հնարավորություններ, հատկապես միայնակ կամ ակտիվ կյանքից դուրս մնացած մարդկանց համար *2.*Հաղորդակցության պակաս. ապահովում է անվտանգ ու հարմար միջավայր փորձի, մտքերի ու զգացմունքների փոխանակման համար *3.*Կրթության և ինքնազարգացման սահմանափակումներ. հնարավորություն է տալիս մասնակցել քննարկումների, ուսուցման ու փորձի փոխանակման *4.*Հոգեբանական բարեկեցություն. շփումը նպաստում է ինքնավստահության, պատկանելիության և հոգեկան առողջության ամրապնդմանը *5.*Քաղաքացիական ու համայնքային պասիվություն. խթանում է ակտիվ մասնակցությունը համայնքային, մշակութային կամ կամավորական նախաձեռնություններին	Ընդունվել է	
2.	Տաշիրի արդիական դիմագիծ. *Մ3* մայրուղու հարակից շենքերի ֆասադների փոխարինում և պատշգամբների ոճային վերակառուցում	Տաշիր համայնքի կենտրոնական հատվածի և *Մ3* միջպետական նշանակության մայրուղու հարակից բազմաբնակարան շենքերի ներկայիս ճակատային հատվածները գտնվում են անմխիթար վիճակում, ինչը հանդիսանում է համայնքի զարգացմանն ուղղված գլխավոր խոչընդոտներից մեկը: Տարիների ընթացքում շենքերի ֆասադների երեսպատման շերտերը ենթարկվել են զգալի քայքայման՝ խաթարելով քաղաքի գեղագիտական տեսքը և ստեղծելով անխնամ միջավայրի տպավորություն: Սույն առաջարկը նպատակաուղղված է հենց այս համալիր խնդիրների լուծմանը՝ ֆասադների և պատշգամբների փոխարինման միջոցով ստեղծելով անվտանգ, ժամանակակից և տեսողականորեն գրավիչ քաղաքային միջավայր: Կշիռատարկվի ամբողջ հատկացված բյուջեն՝ մինչև նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:	Ընդունվել է	